ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք,հեռ.0222 6-14-88,getargel-gt@ mail.ru

22.01.2021թ.
№ 26

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ձեզ է ներկայացվում 11.01.2021-22.01.2021թթ ժամանակահատվածում Գետարգել համայնքի ղեկավարի կայացրած որոշումները:

Առդիր 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Գ. Ազիզյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222 6-14-88, getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> հունվարի 2021 թվականի N 01

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, << Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12- Ն հրամանը և ՀՀ Կոտայքի մարզպետի 29.12.2020թ. N 490– Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կոտայքի մարզի Գետարգել համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի << Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 49-Ա որոշման մեջ << Արևշատ Առաքելյան >> բառերը փոխարինել << Սամվել Սահակյան >> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ. 11-ը հունվարի
գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

<< ԱԼՎԱՐԴ ԱԶԻԶՅԱՆ>> Ա/Ձ-ԻՆ ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունվարի 2021 թվական N 02-Ա

գ. Գետարգել

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Գետարգել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. Ալվարդ Ազիզյան Ա/Ձ-ին տալ 2021 թվականին հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Գետարգել համայնքի Հ. Վերդյան փողոցի թիվ 38/1 հասցեում գտնվող 120.5 քմ խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Ալվարդ Ազիզյանին մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ 12-ը հունվարի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

<< ԱՐԱՔՍԻ ԹՈՐՈՍՅԱՆ >> Ա/Ձ-ԻՆ ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հունվարի 20201 թվական N 03-Ա

գ. Գետարգել

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Գետարգել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. Արաքսի Թորոսյան Ա/Ձ-ին տալ 2021 թվականին հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Գետարգել համայնքի Հ. Վերդյան փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող 26.4 քմ խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Արաքսի Թորոսյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ 12-ը հունվարի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222/ 6-14-88/ getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12>> հունվարի 2021 թվականի N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջները որոշում եմ.

1. Հաստատել Կոտայքի մարզի Գետարգելի համայնքապետարանի աշխատակազմի 2021թ.-ի ամենամյա հերթական արձակուրդների տրամադրման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ 12-ը հունվարի
գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

<<ՀԱՅԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՐԳԵՎԻ >> Ա/Ձ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

14 հունվարի 2021 թվական N 05 -Ա

գ. Գետարգել

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Գետարգել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հայկ Մովսիսյան Պարգևի Ա/Ձ-ին տալ 2021 թվականին հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Գետարգել համայնքի 1-ին փողոցի թիվ 18 հասցեում գտնվող 202.4 քմ տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:
2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Հայկ Պարգևի Մովսիսյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ 14-ը հունվարի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ

<< ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌՈՒԲԿԻ>> Ա/Ձ-ԻՆ ՈԳԵԼԻՑ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

14 հունվարի 2021 թվական N 06-Ա

գ. Գետարգել

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Գետարգել համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. << Արարատ Գրիգորյան Ռուբիկի >> Ա/Ձ-ին տալ 2021 թվականին հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Գետարգել համայնքի Ս. Ալեքսանյան փողոցի թիվ 6 հասցեում գտնվող 28.5 քմ խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Արարատ Գրիգորյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2021թ 14-ը հունվարի
Գ. Գետարգել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետարգել համայնք, հեռ, 0222/ 6-14-88/ getargel-gt@ mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 20>> հունվարի 2021 թվականի N 07

ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն,Գետարգել համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 06-Ա որոշումների և հաշվի առնելով Մկրտիչ Հարությունյանի համաձայնությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գետարգել համայնքային սեփականություն հանդիսացող / հիմք վկայական № 29122020-07-0030/ Գետարգել համայնք 1-ին փողոց 1-ին փակուղի թիվ 1/2 հասցեում գտնվող 0.01108 հա բնակելի կառուցապատման հողամասը և 52.85 քմ օժանդակ շինությունը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Մկրտիչ Հարությունյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
1) օժանդակ շինության 1 քառակուսի մետրի համար՝ 5 200 (հինգ հազար երկու հարյուր) դրամ
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4 524 (չորս հազար հինգ հարյուր քսանչորս) դրամ

4. Մկրտիչ Հարությունյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105229216 հաշվեհամարին՝ 274 820/ երկու հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր քսան / դրամ՝ օժանդակ շինության գինը

2) համայնքապետարանի 900105229174 հաշվեհամարին՝ 501 260 (հինգ հարյուր մեկ հազար երկու հարյուր վաթսուն) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մկրտիչ Հարությունյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մկրտիչ Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20-ը հունվարի 2021թ.
գ. Գետարգել